ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ. ՆԻՒ ԵՈՐՔ, ՆՈՅԵՄԲԵՐ 15, 1895. ԹԻՒ 20 ԱՄԲՈՂՋ ԹԻՒ 107

ՀԱՅԿ

ՀԱՆԴԷՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

HAIK

AN ARMENIAN JOURNAL

Edited by M. S. Gabriel, M. D. 202 West, 23d St., New York, N. Y. Vol. V, 1895.

Հասցէ
Editor of "HAIK" 202 West 23d St.,
New York.
U. S. America.
կամ Redaction de la Revue "HAIK" ևն

ՊԱՅՄԱՆԻՔ
Տարեկան բաժնեգինն է
ամեն երկրաց համար
երկու տալեր կամ տասն ֆրանք
Կանխիկ

ՌՈՎԸՆԴԸԿՈՒԹԻՒՆ

Աղխով Մաղխով Երթաս Բարով.— Հայերը Մեղալրելի՞ են արդեօք յեղափոխութեան համար.— Զէյթուն. Թուրք Կառավարութեան ստախօսութիւնն.— Նամակ Կ.Պոլսէ — Նամակ առ Խմբագրութիւն. Խարբերդ Գաւառի Հայոց Աղերսագիրն առ Սր. Պատրիարք Հայրն.— Լորտ Սօլզպէրիի ճառն Հայաթրքական խնդրոյն վերայ.— Հեռագրական լուրեր.— Այլ և այլք.

ԱՂԽՈՎ ՄԱՂԽՈՎ ԵՐԹԱՍ ԲԱՐՈՎ

Եւրոպա վերջապէս բռնադատեցաւ համոզուելու թէ Թուրք իշխանութեան վերջ տալ հարկ է և Օսմանեան Կայսրութիւնն անդամատելով բաշխելու կը պատրաստուի։ Անգլիա, Ֆռանսա, Իտալիա, Ամերիկա կը յղեն փութով զրահաւորներ Թրքական ջրերն։ Թէև առ այժմ անհնար է ասել թէ ինչպէս պիտի կատարեն գործողութիւններն և ինչ կերպով պիտի բաժնեն երկիրն, սակայն Սօլզպէրիի ճառէն և Տէրութեանց շարժումներէն կ'երեւի թէ համաձայնութիւն գոյացած է միասնական ձեռնարկով վերջ տալու «Հիւանդ Մարդուն» ցաւագին և աղետաբեր կենաց։

Լոնտոնի «Սփէքթէյթօր» թերթն որ անգլիական թերթից քան գամենայն հեղինակազօրն կը համարուի, հետեւեալ կերպն կը պարզէ որ հաւանականօրէն Տէրութեանց կողմանէ ընդունուած կերպն է։

Աւստրիա, աջակցութեամբ Անգլիոյ, պիտի գրաւէ զՄակեդոնիա. Ռուսիա պիտի չուէ ի Հայաստան. և Մեծին Բրիտանիոյ և Իտալիոյ, (պէտք է թերեւս այժմ յաւելուլ նաև Ֆռանսայի) նաւատորմիղքն պիտի անցնին Տարտանէլ։ Մեծ չաբաթա-

թերթն կ'ըսէ թէ Եւրոպիոյ հսկայական զինուորեալ ոյժն չի կրնար քան զայս լաւագոյն կերպով ի կիր առնուիլ յօգուտ քաղաքակրթութեան։

«Սըն» իմացած կը լինի սոսկական աղբիւրէ թէ հետեւեալ կերպով պիտի լինի բաշխումն։ Աւստրիա պիտի առնու զՄակեդոնիա. Դանուբեան գաւառներն անկախ պիտի լինին. Ռուսիոյ պիտի լինի Հայաստան. Եգիպտոս և Սիւրիա պիտի թողուին Մեծին Բրիտանիոյ, և Ֆռանսայի բաժին պիտի լինայ Փոքր Ասիա։ Իսկ Կ. Պոլիս պիտի կառավարուի բոլոր Տէրութիւններըն ներկայացուցող մասնաժողովէ մի։

Կը յուսամք թէ այս ծրագիր կամ նըմանն կը յաջողի շնորհիւ Վեհ. Սուլթան Աբտիւլ Համիտի... մոլեռանդ ապշութեանն և ցլային մոլեգնութեան։

Արժան է յիշել թէ Հայ Ազգն ալ մեծ դեր կատարած կը լինի Թուրքիոյ բաշխման դժուարին գործին ի դիւրութիւն։ Եւրոպա ի տես Հայաստանի անհուն տառապանաց և զարհուրելի ջարդերուն կը մնայր դեռ իւր աւանդական գծին վերայ և իւր բոլոր դիւանագիտական պայքարն տարիէ մ'ի վեր Սուլթանին դէմ կը մղէր ա'յն մտօք թէ հարկ էր պահպանել դեռ Օսմանեան կայսրութիւնն և բարեկարգել զայն անպայման ժամանակի մի համար։ Հայք եղան որ Պոլսեան ժամապատեհ ցոյցով սարսեցին ամբողջ խախտել կայսրութեան շէնքն. Հայք եղան նաև որ պնդեցին հրապարակային բանիւ և գործով այն անհրաժեշտ հարկի վերայ թէ Թուրքն չի խոնարհիր Եւրոպիոյ առանց նախ ծեծ ուտելու. այժմ Եւրոպա ևս համոզուած է այդմ։ Հայո՛ց կը պատկանի նաև զԹուրքըն ծեծելու նախաձեռնութեան պատիւն —Հայ Զէյթունի որ 400 Թուրք կանոնաւոր զօրաց յաղթելով գերի առած է զայնըս և կը սպառնայ քալել Մարաշի վերայ։

Թող ամօթահար գետի'ն մտնեն նաև այն հացկատակ օտարականք որք զՀայս յալկան և կնաբարոյ կը վատահամբաւեն։ Թող տեսնէ Եւրոպա Զէյթունի օրինակէն որ եթէ ուրիշ տեղերու Հայք ալ զէնք հայթայթելու հնար ունենային պիտի չվարանէին ոգի ի բուն ջանալ կործանել այն ժանտաժուտ կառավարութիւնն որ անէծքըն է աշխարհի։

ՀԱՅԵՐՆ ՄԵՂԱԴՐԵԼԻ՞ ՆՆ ԱՐԴԵՕՔ

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ԹԱՅՄԶ լրագիրն խմբագրականի մի մէջ կ'ըսէ թէ Հայոց յեղափոխական թաքթիքներն Անգլիոյ համակրութիւնն պաղեցուցին իրենց մասին։

Այդ մեծ լրագիր իւր խմբագրականաց մէջ երբէք մեղադրած չէր Հայերն Պոլսեան շարժման համար։ Բայց երբ տեսաւ թէ Անգլիական կառավարութիւնն անզօր գտնուեցաւ Հայկական խնդրոյն գոհացուցիչ լուծում տալու, սկսաւ Հայերն մեղադրել, իբր թէ «աւելի շուտով Տէրութիւնք միջամտած պիտի լինէին» եթէ Հայք յեղափոխական շարժում արած չլինէին։

Անգլիական մեծ լրագրին այդ փաստ շատ սկար, շատ անզօր է անգլիական դիւանագիտութեան պարտութիւնն պատրուակելու։

Եթէ Տէրութիւնք կը պահանջեն որ հայ ժողովուրդն գերմարդկային իմաստութեամբ վարուի և իւր անդամոց ոչ մին երբէք անխոհեմ գործ մ'անէ որպէս զի հայ ազգն համակրանաց արժանի համարուի, անիրաւ պահանջ մի կ'ընեն, անհնարին պահանջ մի։

Աւելի լաւ կը լինի որ քիչ մի Հայ յեղափոխականաց զարմանալի քաջութիւնըն ու անձնուիրութիւնն իրենց լուրջ դիտողութեան առարկայ ընեն և մատնացոյց ընեն իրենց հզօր կառավարութեանց զօրինակելի արութիւնն հայ յեղափոխականաց։

ԶԷՅԹՈՒՆ

Զէյթունցւոց շարժումն տալով իբրև մեր նախորդ թուոյ վերջին լուրն՝ յոյս կը յայտնէինք թէ յաղթութեան լուր ալ պիտի գար, և արդարև եկաւ։

1878ին խաբանօք մտան Թուրք զօրքն և պաշտօնէութիւն ի Զէյթուն՝ մինչ մերայնոց պետերն ի Կ. Պոլիս հրաւիրուած կը գտնուէին իբր թէ կեդրոնական կառավարութեան հետ հասկացողութիւն մի կնքելու համար։

Այժմ Զէյթուն նորէն անկախ է և կիրճերուն տէր լինելով պատրաստ է դէմ դնել Թուրք զօրաց։

Մեք Զէյթուն այցելած և նորա տեղագրական և ցեղաբանական հանգամանաց անձամբ տեղեակ լինելով՝ պատճառունիմք յուսալու թէ այն Թուրք բանակն որ այժմ համախմբուած կը քալէ Զէյթունի վերայ, թէև լինի 20,000, չպիտի զօրէ յաղթել Զէյթունի, և շատ կորուստ պիտի կրէ։

Հաւանական է թէ Թուրք բանակին գործողութեանց նպատակն լինի մանաւանդ խուսանել Զէյթունցւոց յառաջխաղացութիւնն դէպ ի Մարաշ քան յաղթել նոցա։

Ահաւասիկ ի ստորև կը դնեմք քաջաց քաղաքին վերաբերեալ հեռագիրներըն։

ԶԷՅԹՈՒՆՑԻՈՑ ՑԱՂԹԱՆԱԿՆ

Տէյլի Քրոնիքլին կը հեռագրեն Կ. Պոլսէն, Նոյ. 6ին, այն տեղեկութիւնն թէ Թուրք կանոնաւոր զօրաց վաշտ մի անձնատուր եղած է Զէյթունցւոց ի Զաքուր Հիսար, սերձ ի Զէյթուն։

Կ. Պոլսէն կը հեռագրեն Նոյ. 12 Թուականաւ թէ նոյն օրն նոր լուր ստացած են հոն Զէյթունի շարժմանց վերաբերութեամբ, որով կը հաստատուի թէ պահպան կօրքն որ նշանաւոր հանդիսացած էր շրջապատելով և գնդակահար սպաննելով հայ յեղափոխականներ, յետոյ իւր զօրանոցաց մէջ պաշարուելով անձնատուր եղած է Հայոց՝ հանդերձ զինուք և ռազմամթերօք, կահիւք և կազմածօք։ Նաև, կ'ասէ հեռագիրն, այժմ Հայք բռնած են զօրաց կայանն, և պահպան զօրք դրած են Զէյթունի և մօտակայից բոլոր կարեւոր դիրքերուն մէջ և ռազմամթերք ու պաշար կը հաւաքեն, ուրիշ նոր ամրութիւններ կառուցանելով և ամենայն իրօք կը պատրաստուին բռնել կենալ իրենց տեղն։

Թուրք կառավարութիւնն կը ջանայ համոզել որ Զէյթունցիք արձակեն անձնատուր եղած զօրքն և կը խոստանայ թէ իրենց ինասող չպիտի գտնուի եթէ իրենց տուներն երթան, բայց Հայք հաւատք չեն ընծայեր։ Դերի առնուած զինուորներըն սպաննելու փոխանակ Հայք լաւ կը վարուին նոցա հետ։ Այս լուր զարմանք պատճառեր է Դրան։

Ըստ Թուրք պաշտօնական հեռագրի, երեք հարիւր Զէյթունցիներ յարձակելով Կոնչէրքէ անուն միւսիւլման գիւղի վերայ՝ բազում արջառ ու պաշար յափշտակած են։

Թուրք զօրք կը կեդրոնանան ի Մարաշ՝ արշաւելու համար Զէյթունի վերայ։ Հրամանատարութիւնն պիտի յանձնուի Վանի նախկին վալի անիծեալ Պահրիին։

ԹՈՒՐՔ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ

ՍՏԱԽՕՍՈՒԹԻՒՆՆ

Անմիտ Համիտի անամօթ գործիչներն իրենց ուժին կարեւոր մասն կը գործածեն Եւրոպիոյ հանրային կարծիքն մոլորցնելու ստայօդ յայտարարութեանց միջոցաւ, և ոչ սակաւ լրագիրներ, թէ յԵւրոպա և թէ յԱմերիկա, տպագրելու պատիւն կ'անեն այդ զրպարտութեանց։

Քանիցս Հնչակեաններու դէմ զրպարտութիւններ հրատարակեց Դուռն, ասելով թէ նոքա «ամենավատ տեսակէ անիշխանականներ են։» Ուրախ ենք որ Հնչակի խմբագրութիւնն յօդուածով մի հերքեց, Սթանտարտի մէջ, այդ անհեթեթ զրպարտութիւն, և կ'արժէ որ նորէն ու նորէն հերքէ երբ առիթ ներկայանայ։

Այս անգամ ստիկանութեան նախաբար Նազըմ Փաշա շրջաբերական մ'է յղեր Եւրոպա, ջանալով հաստատել թէ Թուրքիոյ այս խառնաշփոթութեանց գրգռիչք Հայերն են, և կը յիշէ ՀԱՅՐ թերթն, որ, կ'ասէ, Սեպտ. 1ի թուովն պնդած է թէ պէտք է սկսիլ յեղափոխութիւնն Կ. Պոլսէն։ Այս խօսքով Նազըմ այն խաբէական տպաւորութիւն գործել կ'ուզէ ընթերցողաց մտքին իբր թէ Հայք գրգռած է Հայերն Թրքաց դէմ ելնել և ժխորել երկիրն։ Իսկ Հայքի ընթերցողաց յայտնի է թէ այս թերթ միշտ յորդորած է գաւառաց Հայերն չլինիլ նախայարձակ, չգրգռել Թրքերն, այլ միայն զինուիլ և պատրաստ լինիլ ամենայն պատահականութեան։ Դիւրին էր Հայքի, որ խոր ուշիւ կը դիտէր Եւրոպական պետութեանց թոյլ կացքն հանդէպ Սուլթանին, գուշակել

թէ իրական պաշտպանութիւն չպիտի կրնային երաշխաւորել Հայաստանի համար, և Թուրքք ու Քուրդք պիտի թափէին իրենց մոլեռանդ ատելութեան բոլոր արհաւիրքն մեր ժողովրդի վերայ։ Միթէ պարտ չէ՞ր ազդարարութիւն անել Հայոց դէմ պատրաստուող փոթորիկին նկատմամբ, և յորդորել որ բոլորովին անպատրաստ չգտնուէին։

Արդէն հիւպատոսական տեղեկագրութիւնք հետզհետէ կը հերքեն Թրքաց ոսա լուրերն թէ Հայեր եղած էին նախայարձակ, և Եւրոպա այժմ կը հասկնայ աւելի յստակօրէն թէ Հայք ոչ միայն «անարքիստ» չեն, այլ և ոչ իսկ այն սեռակ յեղափոխականներ են որպէս այդ բառն սովորաբար կը հասկցուի քաղաքակիրթ աշխարհի մէջ։ Հայք իրենց պատիւն ու կեանքն պաշտպանելու կ'աշխատին, ինչ որ ամեն մարդկային էակի սրբազան պարտքն է։ Հայք եթէ ոչխարի պէս մորթուելու ընծայէին իրենք զիրենք, կը լինէին արհամարհելի յաչս մարդկութեան։

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԷ

(Մեր յատուկ թղթակցէն)

Կ. Պոլիս, Հոկտ. 17, 1895

Հոկտ. 12. Հակառակ կառավարութեան խոստման և դեսպանաց ներշնչած ապահովութեան՝ եկեղեցիներն ապաստանողներէն մի քանիներն ձերբակալուեցան, դանակոծուեցան և սպաննուեցան իսկ։ Ջարդն վերսկսելու մասին սպառնալիքներ կը լսուէին իսլամաց կողմանէ, Գասմ-փաշայի բնակիչներէ մի մասն իրենց բնակարաններն աւարի առնուած գտան։ Շատեր փակ գտան իրենց բնակարաններն, Թուրք տանտէրներն չէին ուզեր ընդունիլ իրենց հայ վարձկաններն։ Երբեմն խաներու մէջ ալ նոյնն կը պատահի։ Քանի մը տանտէրներ խոստանան Հայերն ընդունիլ իրենց տանց մէջ եթէ խլամութիւն ընդունին։ Այս խեղճերէ շատեր վերադառնան Բերայի եկեղեցին։

Հոկտ. 13. Կառավարութեան կողմանէ ընդդէմ եկեղեցիներն ապաստանելոց հալածանքն կը շարունակուի։ Հայեր կամին եկեղեցիներն վերադառնալ։ Գումգափուի եկեղեցւոյ դռներն փակ կը գտնեն, Բերայի եկեղեցին մասամբ կը լեցուին։

Հոկտ. 14. Դեսպանաց կողմանէ ոստիկանութեան բռնած ընթացքին դէմ կը բողոքուի. հալածանքն կը դադարի։

Դեսպանական թարգմաններու թոյլատուութիւն կ'ըլլայ այցելել բանտերն։ Բանտարկեալներն սկսին հանդուրժութիւն վայելել։

Շատեր փարձեցին խանութներն բանալ սակայն հարկադրուեցան կրկին դոցել։ Պոլսոյ և Գալատիոյ բոլոր հայ խանութներն փակ են։

Հոկտ. 15. Բերայի եկեղեցին ապաստանողներն կը ցրուին, ի բաց առեալ Գասմ Փաշայի ձորէն վտարեալներն։

Սպառնալիք Իսկիւտարի գնչուներու կողմանէ, սարսափ Սելամալի հայոց թաղին մէջ։ Շատ մը հայ ընտանիքներ դան ապաստանիլ ի Բերա։

Հոկտ. 16. Բերայի մեծ փողոցին խանութներն ալ կը դոցուին։

Երեկոյեան լուր կը տարածուի թէ ընդունուած է ծրագիրն, հարկ է խանութներն բանալ։ Այս լուր տարածողներն Նազիմի գործակալներն են։ Խանութներու մի մասն կը բացուին։

Վեց մեծ տէրութիւնք համաձայնած էին վերջապէս որ Սուլթանն ընդունի Մայիս 11ի ծրագիրն, առանց իւր յաւելուածին, սակայն փոքր ինչ փոփոխմամբ։ Այդ ծրագիրն էր երէկ Սուլթանի կողմանէ ընդունուածն, որ և խոստացաւ քանի մ'օրէն Խաթթը Հիւմայուն մը հանել առայդ։ Աւելորդ խոկ է ըսել թէ Սուլթանն յօժարած էր ընդունիլ Մայիս 11ի ծրագիրն առանց իւր յաւելուածին, (այսինքն առանց եւրոպական ներկայացուցիչներով, հայ վալիներու և եւրոպացի ընդհանուր քննիչի,) այդ ծրագիրն է ընդունուածն փոքր տարբերութեամբ մը միայն. այժմ վեց վիլայէթներու վրայ աւելուած է նաև Տիգրանակերտն և փոխան երեք տէրութեանց կողմանէ առաջարկուելու վեց պետութեանց կողմանէ առաջարկուած և ստորագրուած պիտի ըլլայ... ի մի բան ի դուր թափուեցան այնքան արիւն։

Պատրիարքարանի և Դրան յարաբերութիւնք սկսան։

Բոլոր հայ խանութներն բացուեցան։ Հրապարակն ալ բացուեցաւ։ Կըսուի թէ

աւելի քան 500 հազար ոսկւոյ յետաձգեալ վճարքներ կան։

Պոլսոյ Ջարդն 1,500, Տրապիզոնինն 700, Ագիսարինն 100 կ'ենթադրուի։ Գաւառաց մէջ ցիրուցան զոհերու մասին ստոյգ տեղեկութիւններ կը պակսին։

Կ. Պոլսոյ բանտերուն մէջ կան աւելի քան 1,000 հայ բանտարկեալներ, քանի մը օրէն ամենն պիտի արձակուին կ'ըսուի։

Հայ վարժարաններն վաղն պիտի բացուին։

Թուրք վարչութեանց, գործերու և տանց մէջ գտնուած հայ պաշտօնեաներն համբուած են։ Թուրքեր ուխտած են Հայոց հետ առուտուր չընել։

Շատեր կը քննադատեն այս ցոյցն ու յուզմունք յարուցանողներն։ Պէտք է խոստովանիլ թէ պարագայք չթոյլատրեցին իրենց ծրագրի հետեւիլ։ Պէտք չէ սակայն խստիւ քննադատել զայնս, ադէկ անելու նպատակաւ աշխատեցան։

ԾՈՎ

ՆԱՄԱԿ ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆՆ

Տէր խմբագիր,

Վերջին տարիներս Խարբերդի կուսակալութեան հայ հասարակութիւնը խաղառ կոտորելու նպատակաւ, տեղական կառավարութիւնը այլ և այլ ենգաժէտ միջոցներ ձեռք առած լինելով, խեղճ հայ ժողովուրդը աննկարագրելի ահ ու սարսափի մէջ ինկած, ժամ առաջ ապահովութիւն և պաշտպանութիւն խնդրելու մտօք, Ամեն. Սր. Պատրիարք Հօր բազմաստորագիր հանրագրութիւն մի ուղարկած է, որուն պատճէնը կարեւոր կը համարիմք ի հրատարակութիւն յղել Պատ. խմբագրութեանդ։

ԽԱՐԲԵՐԴ ԳԱՒԱՌԻ ՀԱՅՈՑ

ԱՂԵՐՍԱԳԻՐՆ ԱՌ ՍՐ. ՊԱՏՐԻԱՐՔ

ՀԱՅՐՆ

«Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայր,

Հայ ժողովրդի դէմ Թուրք տարրին չարաղէտ ատելութիւնը որ սասունաւոր վայրագութիւններէն ասդին, խուլ զարգացումներ ունենալով սրտերու մէջ, արդէն ինչպէս կը լսենք, նորանոր կայծերով ինքզինք մատնած է այլ և այլ կողմեր, վերջին շաբաթներու երկիւղագին համեմատութիւններ առած, առաւել քան երբէք անտանելի կացութիւն մի ծնած է Խարբերդի կուսակալութեան մէջ։ Գործ ու առուտուր դադրած, տեղւոյս անօգնական հայ հասարակութիւնը, կարծես ամեն րոպէ, արիւնահեղ տեսարաններու համասարսափ սպառումի մը, կամ աւելի ճշդիւ բոլորական ջարդի մը նախընդօրին մէջ կը գտնուի։

Այս վիճակ իսլական երկիւղի արդիւնք լինելէ հեռի, բնական հետեւանքն է ճշգրիտ իրողութեան զոր ստորև կը փութանք Ձեր Ամենապատուութեան ներկայացնել։

Տեղւոյս կուսակալ Բէուֆ փաշա, ընկերակցութեամբ զինուորական հրամանատար (լիվա) Մուսթաֆա փաշայի կարգէ դուրս այցելութիւններ տուին գիւղերը։

Այդ ծանօթ ըլլալով թէ կուսակալը բնութեամբ չսիրեր ժողովրդական դասակարգի հետ յարաբերիլ, և ներկայ փափուկ պարագաներու մէջ սոյն օրինակ գիւղաշրջանի մը տարադէպ անհարկիութիւնը աչքի դարնելով մանաւանդ, սոյն կարգադրութիւն կը բաւէր ինքնին կասկածներ թելադրել ժողովրդի մտքին, կասկածներ որոնք յետոյ յաջորդաբար հաստատուեցան կառավարական սոյն բարձրաստիճան և անօրինակ գործունէութեան արդիւնքէն։

Արդարեւ փաշաներու յորդորներուն շնորհիւ, քանի մը գիւղերու պէյեր որոնք երկար տարիներ իրարու անհաշտ թշնամի էին, և այսպիսով դուլ ու դադար տուած էին հայ գիւղացւոց վրայ իրենց ի գործ դրած հարստահարութիւններուն, յանկարծ բարեկամութեան ձեռն կարկառեցին իրարու... և մինչ այս տեսակ սիրալիր յարաբերութիւններ կը յաջողին մէկ կողմ, ականատեսներ կը հաստատեն թէ կուսակալութեան Հիւսէյնիկ գիւղի արօտավայրին մէջ գտնուած մթերանոցէն դէպ ի Պէյի մը բնակարանն փոխադրութիւններ կատարուած են։ Եւ ինչ՞ փոխադրութիւն.— չորս բեռ մարթինի հրացան, փամփուշտ ևն.։ Դարձեալ վերջերս իրարու ետեւէ նոր նոր առաքումներ տեղի ունեցած են ոստիկանաց բոլոր գիւ-

ղերուն մէջ։ Բաց ասոնց, ուրիշ ականատեսներ կան որ վերը գրուածին նման ուրիշ փոխադրութիւններ ալ կը կատարուին, որոնց ամենուն նպատակին վրայ պէտք է՞ արդեօք ո՛և է տարակոյս ունենալ ...։

Եւ եթէ պէտք է ունենալ, չնորհակալ ենք Թուրք ժողովրդի անքաղաքակրթութենէն որ, հակառակ այն ծածկամտութեան որով Թուրք մեծամեծները կը ջանան Թաքուն պահել իրենց սէրուբեան խուժադուժ տրամադրութիւնքն ու պատրաստութիւնները, ասդին ռամիկ դասակարգը կարծես մեր բոլոր տարակուսանքը փարատելու համար, քանի մ'օրէ ի վեր բացորոշակի սպառնալիք սկսած է ամենուն յայտնել Թէ «Մօտ է ժամանակը, պէտք է ջարդենք զՁեզ, պէտք է վերցնենք խութը մէջ տեղէն, որպէս զի եթէ ըլլայ որ եւրոպացիք գրաւեն մեր երկիրը, նորէն մենք ըլլանք երկրին բնիկ ժողովուրդը, և Թերեւս օր մը զարգանալով դառնանք իրական տէրը։»

Ահա իրողութեանց համառօտ բայց ամենաճշգրիտ արտայայտութիւնը որ ինքնին բաւական է առաջի Ձեր Ամենապատուութեան բերելու Թէ որչափ և ո՞րչափ ի ծայր վտանգին ենք։

Մահաշչուկ վայրկեանը կը մօտենայ, Սրբազան Հայր, և մենք չունինք ուրիշ ոչ մի ճար բայց եթէ պաղատագին խնդրել որ զմեզ այս սպառնալիքէ աղէտէն ապահովելու համար կանխագոյն միջոցներն և ջանացողութենէնք չնորհ ընէք փութացնել։

Ճիշդ ժամանակին մէջ կը գտնուինք ուր ամեն ատենէ աւելի կը կարօտինք իմաստուն և փութաջան տնօրինութեանց մեր Ամենապատիւ և ամենարթուն Պետին որու կը նայի ամբողջ Հայութիւնը։

21 Սեպտ. 1895, Մ. Ազիզ,

Սարագրութիւններ»

ԼՈՐԴ ՍՕԼԶՊԷՐԻԻ ՃԱՌՆ

ՀԱՅԱԹՐԲԱԿԱՆ ԽՆԴՐՈՑՆ ՎԵՐԱՑ

Անգլիոյ նախարարապետին Նոյ. 9ի ատենախօսութիւնն ինչ ինչ կարեւոր կէտեր կը լուսաբանէ։ Լորտն հերքեց սխալ հասկացողութիւնն որ իւր առաջարկի մասին տարածուած էր իբր Թէ ինքն Մայիս 11ի ծրագրին վերայ յաւելուած մի առաջարկած էր։ Առաջարկածն յաւելուած մի չէր այլ նոր ծրագիր մի։ Նա Թելադրած էր որ շարունակէ ներկայ մահմետական մեքենաւորումն. բայց դրուի եւրոպական վերահսկողութեան տակ։ Իսկ դեսպանաց Մայիսի ծրագիրն գլխաւորապէս կը տրամադրէր որ քրիստոնեայ պաշտօնէից համեմատական Թիւ մի աւելնայ դաւառական գործադիր իշխանութեանց վերայ ուր որ Հայոց ստուար Թիւ մի կը գտնուի։ Ինքն պնդած չէր Թէ իւր առաջարկն է լաւագոյնն։ Սուլթանն նախամեծար համարած էր միւս կերպն։

Եւ ի՞նչ էր Լորտին դիտումն այս Թելադրութիւնն անելու մէջ։ Ինքն կը բացատրէ գայն։ Կը դարհուրի եղեր չիցէ Թէ Տէրութիւնք մէկ կրօնքին (քրիստոնէականին) կողմնակից երեւային յաւէտ քան միւսին։ Այդ պիտի լինէր վերջին աստիճան վտանգաւոր։ Որո՞ւ չահուց վտանգաւոր։ Անգլիոյ, ինչպէս ինքն իսկ կը պարզէ։ «Մեծին Բրիտանիոյ Թագուհին աւելի մահմետական կը կառավարէ քան Սուլթանն, և Բրիտանական կառավարութիւնն զանց արած պիտի լինէր իւր պարտաւորութիւն եթէ այնպէս երեւէր Թէ կրօնական կողմնակալութիւն կը գործադրէր այնպիսի լայնածաւալ կայսրութիւն մի վարելու ատեն։ Կառավարութիւնն չունէր ուրիշ պարտք բայց միայն ցուցնել բացարձակ անկողմնակալութիւն։»

Գովելի բան է արդարեւ լինիլ անկողմնակալ, բայց ներելի է հարցնել Թէ արդեօք Լորտ Սոլզպէրի յաւէտ մահմետական կրօնին կողմնակալ եղած չի՞ լինիր երբ կը Թելադրէ որ Թուրքիոյ գործադիր իշխանութեան մէջ քրիստոնեայք և մահմետականք հաւասար բաժին չունենան բնակչաց կրօնական դաւանութեանց համեմատութեամբ։ Մայիսի ծրագիրն աւելի՛ անկողմնակալ է այս նկատմամբ։ Բայց անարժէք էր առանց եւրոպական քօնդռօլի։ Ուրեմն Նախարարապետին առաջարկն շատ աւելի լաւ պիտի համարէինք եթէ յաւելուած լինէր Մայիսի ծրագրին։ Ի վերայ այսր ամենայնի, ճշմարիտ է Թէ եւրոպական քօնդռօլն աւելի էական է քան հայ պաշտօնէից անուանումն առանց անոր։ Եւ հետևապէս Լորտին ծրագիրն լաւագոյն էր քան զՄայիսեանն։

Գալով խնդրոյն ներկայ վիճակին, նախարարապետն չուզեց երկարել խօսքն և պարզել իւր կարծիք։ Միայն սաչափ ասաւ թէ ի հարկէ նախախնամական օրինաց կը կործանէր ամեն զեղծ կառավարութիւն։ Եթէ Սուլթանն չհամոզուի ի բան որոշելու որ արդարութիւն անէ Հայոց, Տէրութիւնք պիտի ստիպուին միջամտել։ Սակայն առանձինն մէկ Տէրութիւն չէ կարող, խոյս տալով դաշնագիր ներէն, լուծել զխնդիրն իւրուրոյն եղանակաւ։ Կը կարծէ թէ Տէրութիւնք զատ զատ գործելու վտանգն եւրոպիոյ խաղաղութեան մասին կը տեսնեն, և պատրաստ են միաբան գործելու։ Թէ ճիշդ ի՛նչպէս պիտի գործեն եթէ Սուլթանն յամառի, դիւրին չէ մարգարէանալ։ Կրնայ լինիլ որ նոքա ձանձրանան տառապելոց անդադար ազաղակէն և ուրիշ բան գտնեն դնելու համար ի տեղի այն կառավարութեան որ 40 տարի առաջ տածեալ յոյսերն չի լեցուներ։

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Թղթակից մի կը գրէ Տէյլի Նիւզի— Կ·Պոլսէն բարձրաստիճան պաշտօնեայէ մի յղուած նամակ մի կ'ասէ թէ Սուլթանն միայն պատասխանատու է այն ժըխտրմանց և կոտորածոց համար որ տեղի ունեցան հոն։ Բանի մ'ամսէ ի վեր Պալատական գործակալներ կը յորդորէին զՊատրիարքն ներմուծել առ Սուլթանն պատգամաւորութիւն մի՝ խնդրելու կայսերական գթութիւն և բարեկարգութիւն, ըստ որում դեսպանաց միջամտութիւնն դժպհի էր։ Պատրիարքն կը պատասխանէր թէ ինքն կարող չէր անել զայդ։ Յայնժամ Պալատի գաղտնի գործակալներ դրդեցին Հայերն ներկայացուցանել մեծ Եպարքոսին աղերսագիր մի, որոյ ընդունելութիւնն խոստացան։ Ուրեմն ցոյցն պալատական ներքնգործութեան արդիւնք էր։ Երբ Հայք տեսան թէ ի ծուղակ առաջնորդուած էին, շտապն գրդռեցան և կրակեցին։ «Սոֆթա» կոչուածներն որք ջարդերն արին հետևեալ օրն, զինուորներ կամ արձակեալ բանտարկեալներ էին՝ սոֆթայի հանդերձ հագած և զինուած։ Նոցա հրաման եղած էր միայն սպաննել Հայերն։ Այս ծրագիրն հաշուեալ էր այնպէս ցուցնել թէ մոլեռանդ յարոյթ մ'էր։ Սակայն ամենայն իրօք կազմակերպեալ կոտորած մ'էր Դեսպաններն վախցուցնելու մտօք կարգադրուած։

Կատսթոն Տիկին Նովիքոֆի մէկ նամակին պատասխանելով, կ'ասէ թէ Սուլթանն մարդկութեան իրրեւ անէծք տըրուած է։

Անգլիերէն թերթերէ կը տեղեկանամք թէ Հայ Ամերիկացի բժիշկ մի, որ Տաճկաստան գնացեր և նորէն վերադարձեր է յԱմերիկա, տխուր փորձառութիւններ կը պատմէ։ Անցեալ Յունիսին նա ստիպուած է եղեր Ն·Ե· Հէրալտին նամակ մի գրելով յայտարարել թէ բոլոր Հայք ազատ էին և կը վայելէին Թրքաց հետ հաւասար իրաւունք։ Այս նամակ ստորագրած է կեղծ անունով մի, և ուրիշ երկու ոստիկանական լրտեսներ ևս ստորագրած են զնոյնն։

Թայմզի Պոլսեան թղթակիցն կը հեռագրէ թէ վերահսկող Մասնաժողովոյ անդամոց անուններն իմացած է և կը յաւելու· «երեք Թրքերու երկուքն ոչնչութիւններ են և մին ներքնգործ մեքենայող։ Քրիստոնէից մին վարպետ և գործաւոր է, միւսն վարպետ և ակար, և երրորդն սքանչելի հուիսթ խաղցող մի։ Նախագահն դեռ չէ ընտրուած։ Վատահօրէն կարելի է նախատեսել թէ Մասնաժողովն չէ որպիսի Բեամիլ փաշայ կ'ուզէր։

Դրան պաշտօնական մէկ յայտարարութիւնն կ'ասէ թէ քսան Հայեր Սէվէրէկի մէջ ոստիկանաց վերայ յարձակեր են, և հետեւորդ կռուոյն մէջ քանի մի Թրքեր սպաննուած են։ Ապա Հայք կրակ ձգած են ի շուկան։ Նաև, իբր թէ 200 Հայ, Բրդու և Լազի տարազով հագուած, պաշարեր են Մանիսա գիւղն, բայց կարելի եղեր է զիրենք ցրուել։ Նաև, Զէյթունցիք Իսմայիլի անուն գիւղին վերայ յարձակեր և երեք տուն այրեր են։ Պատուաւոր դիրք ունեցող Հայ մի իւր տան մէջ փամփուշտ չինած ատեն՝ ձերբակալ-

ուեր է։ Մի քանի հայ լրտեսներ, զինուորի և պաշտօնակալի գգեստով ծըպտեալ, կալանաւորուած են։

Տիրագին լուրերն հասան Նոյ 4ին։ Սասունի մէջ սովելոց օգնող և Հայոց պաշտպանութիւն ընծայող միսիոնարներն որոշած են, յարաճուն չփոթութեան պատճառաւ, յետաձգել գործողութիւններն և ի Բաղէշ ապաստանիլ։ Նաև, Լոնտոնեան Թայմզն, խմբագրականին մէջ ասած կը լինի թէ Հայք իրենց յեղափոխական հընարքներովն կորուսին Անգլիական կառավարութեան համակրութիւնն։

Եւ ահա Նոյ։ 6ին կուգայ մխիթարական հեռագիր մի թէ Մեծ պետութեանց դեսպաններն զատ զատ գնալով ի Դուռն պնդած են որ կարգ վերահաստատելու համար անմիջական և ազդու միջոցներ ձեռք առնու, յայտարարելով որ եթէ կառավարութիւնն չէ կարող, Տէրութիւնք միաբանօրէն պիտի առնուն հարկաւոր քայլն այդ մասին։ Հեռագիրն կը յաւելու որ եթէ որոշապէս հաստատուած չլինէր թէ Հայ Յեղափոխական Յանձնախմբեր չափով իւիք պատճառ տուած են այս խառնաչփոթութեանց, Տէրութիւնք ասկէ առաջ միջամտած կը լինէին զՀայս անդրագոյն նեղութենէ պատսպարելու համար։ Սակայն հաւիւ երկբայելի է թէ Հայք չեն բոլորովին մեղադրելի և թէ Թուրքք ամեն առիթէ օգուտ կը քաղեն վրէժինդրութեան և ջնջման քաղաքականութիւն մի գործադրելու համար։

ՌՈՒՍԻԱ ՊԻՏԻ ԳՐԱՒԷ՞ ԶՀԱՅԱՍՏԱՆ

Լոնտոն, Նոյ։ 7։ Վիէննայէն առ Տէյլի Նիւզ ուղղեալ հեռագիր մի կը ծանուցանէ թէ հասկացուած է որ եթէ անկարգութիւնն չարունակէ Հայաստանում, Ռուսք մի քանի օրէն պիտի չուեն այս երկիրն առանց սպասելու Տէրութեանց հաւանութեանն։

Կ'ասեն թէ Եւրոպական Տէրութեանց վեհաժողով մի տեղի պիտի ունենայ այս շարժման հետ, լինի ի Կ։ Պոլիս, ի Լոնտոն կամ ի Պէրլին, որոշելու համար ռուսական դրաւման տեւողութիւնն և անոր աշխարհագրական սահմաններն։

Անգլիական նաւատորմիղն չկրնալով բաւական պարէն գտնել ի Լեմնոս, ստիպուած է Սալոնիկ երթալ այդ նպատակաւ։ Վեց նաւ ևս պիտի աւելնան նաւատորմիղին վերայ։

Տիրահռչակ Զէքի Փաշայի կայանն եղող քաղաքէն լուր առնուած է թէ 2,000 Հայ սպաննուած է յերիզա վերջին խռովութեանց առեն։

Նոյ։ 9ին կը հեռագրեն թէ Լորտ Սալզպէրի մտերմօրէն առաջարկեր է տէրութեանց բաշխել զԹուրքիա։ Հռովմէն լուր կուգայ թէ յայտմ Իտալիա կատարելապէս համաձայն է Անգլիոյ, և թէ Իտալական նաւատորմն պատրաստ է գործակցելու Բրիտանիին ե'րբ եւ Եւրոպոյ խաղաղութեան շահերն պէտք ունենան այդըմ։

Վօսիշէ Ցայթունկին լուր եկած է թէ նոր կոտորածներ տեղի ունեցած են Կարնոյ նահանգին մէջ, շատ գիւղեր աւրուած են և ահագին թուով մարդիկ սպաննուած։

Բարիզ, Նոյ։ 7։ Եւրոպիոյ հայ գաղթականութեանց ներկայացուցիչներով ժողով մ'եղաւ հոս այսօր և որոշեց վեց Տէրութեանց դիմում մ'անել և աղերսել նոցա անմիջական միջամտութիւնն կատեցնելու համար Օսմանեան կառավարութեան ձեռքով Հայոց ջնջումն։

Ուստրրի Հայերն լուր ստացած են Խարբերդէն թէ Բաւէֆ Ռաչա ծրագրեր է բոլոր գաւառին Հայոց կոտորածն անմիջապէս երբ իմացուի թէ Եւրոպացիք կը շարժին զԹուրքիա դրաւելու։ Այս վախճանին համար զինուորական հրամանատարն զինած է բոլոր Թուրքերն ու Քուրդերն։

Ուստրրի Հայերն կ'ուզեն մաս-միթինկ մի սարքել հանրային համակրութիւն արծարծելու համար։

Ապտակ մի Սըր Ֆիլիպ Բըրիի։ Սուլթանն չքանչաներ է զՊահրի փաշա, Վանի

նախորդ վալի, Օսմանլըէի կայսերական կարգին մեծ ժապաւէնովն։ Պաշրի պաշտօնանկ եղած էր շնորհիւ Անգլիոյ դեսպանին կողմէ եղած ներկայացմանց ընդդէմ նորա զեղծ վարչութեանն։ Պաշտօնական կազէթն, սակայն, կը ծանուցանէ թէ իւր բարի ծառայութեանց համար շըքանշանուած է Սուլթանէն։

Խարբերդի կառավարիչն, Ամերիկացի միսիոնարներուն օգնութեամբ, յաջողած է արիւնհեղութեան առաջքն առնուլ և կարգը վերահաստատել։

Տրապիզոնի Հայերէն երեք երևելիներ, որոց մին եկեղեցական մ'է, դատուած և մահուան դատապարտուած են իբրև մասնակից վերջին շփոթութեանցն։ Այս լուր մեծ յուզում յառաջ բերած է ի Կ. Պոլիս։

Խռովութեանց լուրեր կը հասնին Պուլանըխէն, Խարբերդէն, Ուրֆայէն, Սեբաստիոյէն և Տիարպէքիրէն։

Հայաստանի բարեկարգութեանց հըսկող Մասնաժողովի անդամք ծանուցեր են թէ Շէվքիք էփէնտի պիտի լինի նախագահն։

Սուլթանն Գերմանիոյ օսմ. դեսպան զԹէվֆիք փաշա կոչած է ի Կ. Պոլիս։

Կը գրուցուի թէ Սուլթանն, Կ. Պոլսոյ մէջ իրաց սպառնալից վիճակէն սարսափած, Բրիտանական նաւատորմղի պաշտպանութիւնն խնդրեր է։

Տիգրանակերտի վալին հեռագրած է թէ Հայեր Նամազի ատեն յարձակեր են մզկիթին վերայ, որով երկուստեք շատ մարդիկ սպաննուեր են։ Սթանտարտ կ'ասէ թէ Տիարպէքիրի Հայերն զինուած են եղեր րիվօլվէրներով և դաշուններով, և 70 Թուրք մորթած են մզկիթներուն մէջ, ու շուկային մէջ մի քանի տեղ կըրակ ձգած են, թէև հրդեհն խափանուեր է։

Գաւառներէն Հայք պատգամաւորութիւններ կ'ուզեն եղեր յղել առ ռուսական դեսպանն Նէլիտօֆ, խնդրելու որ Ջարն գրաւէ զՀայաստան և վերջ տայ խռովութեանցն։

Մեծ Եպարքոս Քեամիլ Փաշան գաւառաց վալիներու հեռագրական հրահանգ յղած է որ ամեն ջանք ի գործ դնեն միւսիւլմանաց յուզմունքն հանդարտեցունելու։

Պատրիարք Հայրն ալ գաւառաց եպիսկոպոսներուն շրջաբերական մ'է ուղղած որ յորդորեն զՀայս հանդարտ կենալ և սպասել գործադրութեանն այն բարեկարգութեանց զորս Դուռն խոստացաւ։

Սթանտարտ նորէն կը պնդէ թէ շատ մի ազատական Թուրքեր, որք Սուլթանին կենաց դաւաճանող ամբաստանուած էին, արդարեւ ի ծով թափուած են։ Աւստրիական Լոյտ շոգեւաւի մի նաւապետըն ալ դիտակաւ դիտած է եղեր խեղդման արարողութիւնն։

Բաղէշի Ամերիկացի միսիոնարք գանգատեր են թէրէլի թէ իրենց կեանք վըտանգի տակ է։

Կարնոյ ժխորումն աւելի ծանր է եղեր քան ի սկզբան ծանուցուածն։ Թուրքըք դեռ կը շարունակեն Հայոց խանութներն կողոպտել, և արդէն 200 հայ սպանեալք կը հաշուին։

Կ. Պոլսէն կը հեռագրեն Նոյ. 5ին. Պաշտօնական շրջանակաց մէջ հաւաստեալ է թէ Տէրութեանց դեսպանք ստուգիւ ըսպառնացած են Դրան որ եթէ ինքն չի զօրեր խաղաղել զերկիրն, իրե՛նք պիտի մէջ մտնեն ինչպէս արին 1860ին Սիւրիոյ կոտորածին առթիւ։

Կարնոյ մէջ 320 հայ դիակներ գըտնուած են։ Տիարպէքիր երեք օր Քրդաց ձեռքն է մնացեր։

Լոնտոն, Նոյ. 6. ՓՕՍԹ կ'ըսէ «Դեսպանք ստանալիք մ'են արեր որ ոչ այլ ինչ է բայց ծանուցանել թէ պիտի գրաւուի Թուրքիա։ Անգլիա պատրա՞ստ է համաձայնելու։»

ԿՐԷՅԹԻՔ կ'ըսէ թէ այս կը նշանակէ Հայաստանի գրաւումն Ռուսիոյ կողմէն։

ՏԷՅԼԻ ՆԻՒԶ կ'ըսէ. Այս է սկիզբն վախճանին։ Երեկուան դահլճի ժողովն բըռնակարօրէն հաւանութիւն տուած է այս դիւանագիտական մեծ հարուածին։ Թուրքիա այժմ քայքայման և բաշխման չափելի հեռաւորութեան մէջ է։

ՔՐՕՆԻՔԼ կ'իմանայ հեռագրէ մի թէ Սասնոյ մէջ գործող միսիոնարներն ի Բաղէշ վերադարձեր են և բոլոր միսիոնարներն մէկ տան մէջ ժողովուած կը մնան։

Հիւպատոսական տեղեկագրութիւնք կը ցուցնեն թէ Ջելանի Շէյխին հրամանատարութեամբ Քրդերն մտեր են ի Տիարպէքիր և անմիջապէս սկսեր են յախուռն կոտորել Քրիստոնեաներն, կողոպտելով և հրդեհելով քրիստոնեայ թաղերըն։ Հալածեալով խոյս տուած են կաթոլիկ և հայ եպիսկոպոսներն, և Փռանսական հիւպատոսն անմիջական վտանգի մէջ գտնուած է։

(Այս լուր կը ցուցնէ Եւրոպիոյ թէ Դրան պաշտօնական հեռագիրներն ո՛րքան հիմնապէս ստայօդ են։)

Քեամիլ փաշա, Մեծ Եպարքոսն, պաշտօնանկ եղած է

Մեծ իսլամական ցոյց մի կարգադրուած էր Նոյեմբեր 1ին համար, բայց Սուլթանն, երկնչելով հետևութիւններէն, ազդ մի յղեց Թուրք լրագրաց թէ մտադիր է Սահմանադրութիւնն հռչակել։ Այս իմացուելով, ցոյցէն հրաժարեցան։ Այն ատեն ուրիշ հրաման մի ելաւ, որ նախորդ հրամանն կը բեկանէր։ Եւ ահա ձերբակալութիւններ գործուիլ սկսան, և ոստիկանութեան դիմադրութիւն ընծայողներ եղան Թրքաց մէջէն, և շատեր ըսպաննուեցան կռուոյն մէջ։

Կը զրուցուի նաև թէ Սուլթանի գըրասեղանին վերայ սպառնական նամակ մի գտնուած է որով կը հրամայեն իրեն հրաժարիլ գահէն տասն աւուր մէջ, եթէ ոչ պիտի սպաննուի։

Լայնածաւալ կոտորածոյ լուրեր կը հասնին օր ըստ օրէ դեսպանատանց։ Զոհերուն մէջ կան մարոնիներ ալ։

Մինչև իսկ դիւանագիտական շրջանակաց մէջ հաստատութիւն կառնու այն կարծիքն թէ Համիտ հրամայած է ջնջել զՀայս։ Գրգռումն կը տարածուի ի Սուրիա, Պաղտատ և Մուսուլ։

Դժգոհութիւնն ցամաքային և ծովային բանակներուն մէջ ալ կ'աճի, և կը պատճառէ շուարում և անկարգութեան զգացում ի Դուռն։

Փռանսայի արտաքին գործոց նախարարն, Նոյ. 9ի ճառին մէջ յայտարարած է Նախարարաց թէ Տէրութիւնք համաձայն են ի մասին ընթացքին որում պիտի հետևին հանդէպ Դրան։ Միջերկրական նաւատորմիղին արևելեան բաժնին հրաման տրուած է դիմել արևելեան եզերքին մօտ։

Իտալիոյ կառավարութիւնն ալ հրամայած է երկու մարտանաւ անմիջապէս յղել դէպ ի Կ. Պոլիս։

Կ. Պոլիս, Նոյ. 11. Երուսաղէմի մօտ անգլիական միսիոնարութեան բնակարանըն յարձակում կրած է խուժանէն։ Միսիոնարք խուսափած են բայց սպասաւորներէն ոմանք սպաննուած են։

Դեսպանք աւելի խիստ լեզուաւ պահանջած են Դուռէն որ անյապաղ իմացնէ իրենց թէ ինչ միջոցներ ձեռք առած է կարգ վերահաստատելու համար Հայաստանում։

Նոր զօրաց ժողովումն յոյժ դանդաղ կերպով յառաջ կ'երթայ, այնպէս որ անյապաղ օգուտ չի սպասուիր այդ միջոցէն։

Վերջին ութ կամ տասն աւուր մէջ իբր 300 Հայեր Կ. Պոլսէն աքսորուած են առանց դատուած լինելու, ոստիկանութիւնն կը շարունակէ ձերբակալութիւններն։

Կարնոյ և Սեբաստիոյ մէջ ամբողջ գաւառակներ աւերած են Քիւրդք, որք սրով և հրով չիք դարձուցեր են գիւղ գիւղի ետևէ։ Քրոնիքլին կը գրեն թէ Կարինէն մինչև Տրապիզոն բոլոր երկիրն աւերակ դարձեր է. ամեն հայ գիւղ և աւան աւերակ է և սպաննուածներուն դիզեր կը մնան անթաղ։

Ուղեւոր մի հոս (Կ. Պոլիս) հասաւ անցեալ օր Տրապիզոնէն, կը պատմէ թէ Կարնոյ և Բաբերդի միջև հանդիպած է երեք հարիւր կանանց որք ի ծունր եկած ճամբուն վերայ կ'աղերսէին պաշտպանութիւն, ասելով թէ իրենց էրիկներ ջարդուած էին և իրենք կը մնային անտուն և անսուաղ։

Եթէ Կարնոյ մէջ, և այն ի ներկայութեան բարեկարգութեանց վերահսկող Շագիր փաշայի և զօրաց, խաժամուժն այնքան Հայեր կոտորեց անխտիր, այլ ինչպէս կարելի է յուսալ որ գիւղերու և փոքր քաղաքաց մէջ խուժանին և Քիւրդ հրոսակաց խժդժութիւններն զսպող գտնուի։ Կարնոյ մէջ քարիւղն մեծ առատութեամբ գործածեր են տներն հրդեհելու ատեն։ Խռովութիւնն սկսած է յարձակմամբ մի Պալատին վերայ, հայ բանտարկելոց ազնջուելուն առթիւ։

Ելնող Մեծ Եպարքոսն, Քեամիլ Փաշա, Հալէպի կուսավարիչ նշանակուած է. այս կը համարուի իբրեւ աքսորում։

Տիարպէքիրի մէջ ջարդուած քրիստոնէից թիւն 5,000ի կը հանեն նորագոյն հաշիւք։

Արաբիայէն, որ օսմ. կայսրութեան է'ն վիրաւորելի կէտն է լուր կուգայ թէ թուրք զօրաց և Արաբաց միջև կռիւ եղած է Սէնհայի մօտ, յորում 30 հոգի սպաննուած են։

Մշոյ մէջ պատահած նոր խռովութեանց լուրեր ստացուած են ի Բրիտանական դեսպանատունն ի Կ. Պոլիս։

* * *

ՄԱՐՏԱՆԱՒՈՒՑ ՇԱՐԺՈՒՄՆ

Ֆիկարո կը ծանուցանէ թէ երեք Ֆրանսական մարտանաւ Քանէն մեկներ են դէպ ի Թրքական ջրերն։

Ամերիկեան մարտաւաւն «Մարպլհէտ» արդէն դէպ Իսկէնտէրուն յղուած էր, Նոյ. 11ին Ուաշինկթընէն հրաման եղաւ որ «Սան-Ֆրանսիսկո» մարտանաւն ևս Մարսիլիայէն դիմէ դէպ ի Թրքական ջրերն՝ պաշտպանելու Ամերիկացիներն։ Ի հարկին աւելի զրահաւորներ ալ պիտի յղուին շուտով Միացեալ Նահանգներն ներկայացունելու Թուրքիոյ առջեւ։

Նուպար Փաշա, Եգիպտոսի Նախարարապետն, հրաժարած է պաշտօնէն։ (Ո՛ և է թերթ չակնարկեր թէ Նորին բարձրութեան հրաժարականն յարաբերութիւն ունենայ Թուրքիոյ տագնապին հետ, կամ թէ մտադրութիւն կենայ զնա պաշտօնի

կոչելու Թուրքիոյ մէջ կատարուելու հաւանական յեղաշրջութեանց առթիւ։ ԽՄԲ.)

Հրաժարեալ Բեամիլ Փաշայի մասին՝ Ֆրանքֆորթ Ցայթունկ կ'իմանայ թէ վերջերս Սուլթանին յիշատակագիր մի մատուցած է եղեր բացատրող այն վտանգներուն որք պալատական կառավարութեան ներկայ դրութենէն կը ծագին։

Սուլթանն յոյժ կատաղած պատուեր է թուղթն և գոչեր է վագրօրէն «Մատնի՛չ։»

Բեամիլ խոյս տուեր է Պալատէն, վախնալով որ կը սպաննուի։

Ի Մալաթիա ևս խռովութիւնք տեղի ունեցեր են և շատեր սպաննուած են, ի համարի որոց չորս Ֆռանսացի ճիզուիթ միսիոնարներ։ Ֆռանսական դեսպանն յոյժ զօրեղ ծանուցագիր մի Դրան պիտի ուղղէ այս մասին։

Խարբերդէն առ Թէրէլ հեռագրած է Միացեալ Նահանգաց գործակատարն թէ միսիոնարքն ողջ են բայց ծայրայեղ վտանգի մէջ։

Յեղափոխական գրականութիւնն ընդարձակօրէն կը սփռուի Փոքր Ասիայում և ծեր Թրքերն ալ յեղափոխական գաղափարով խմորուիլ սկսեր են։ Երիտասարդ Թուրք կուսակցութիւնն ապստամբելու պատրաստ կը համարուի։

Սիւրիոյ մէջ Ռէսիֆներն որք վերջերս դէնքի տակ կոչուած են, յամառաբար կը մերժեն հրամանն։

ՍԱՍՈՒՆ

Պոսթոնէն Ամերիկեան Պօրտ ընկերութեան միջոցով 10,000 տոլար յղուած է ի Կ. Պոլիս, միսիոնար Փիթի, Սասնոյ կարօտելոց բաշխուելու համար։ Սասնոյ աւերեալ գիւղից ներուն մէկ մասն բաւական չինուած են ապաստան ընծայելու համար ձմրան խստութեանց դէմ։

Հիւպատոս Հէմփսըն կը ծանուցանէ թէ, թէպէտ միսիոնարք առ ահի քաշուեցան Սասունէն, օգնութեան մատակարարութիւնն ապահով ձեռքերով պիտի շարունակուի։

Նիւ Եորքի Ամերիկեան երկրորդ յանձնախումբն ևս 400 ոսկի յղեց Անգլիոյ Ցանձնախմբին՝ Սասունի տնանկաց ի նպաստ։

Նիւ Եորքի Քրիսչէրն Հէրալտ շաբաթաթերթն, զոր պէտք է չշփոթել Նիւ Եորք Հէրալտ օրաթերթին հետ, կը շարունակէ ի նպաստ Սասնոյ սովելոց հանգանակութիւն անել գովելի փութաջանութեամբ։

Պոլսոյ ամերիկացի միսիոնարներն ջերմաշին դիմում մ'են արեր Ամերիկայի՝ օգնել չքաւորելոց բազմութեանն, զոր 250,000 կը հաշուեն սովամահ լինելու վտանգին մէջ։

Վերջերս ե՛ւ Ամերիկացիք ե՛ւ Հայեր յաճախ կը քննադատեն հրապարակային ժողովոց մէջ յԱմերիկա զթէրէլ, Միացեալ Նահանգաց ներկայացուցիչն Սուլթանին քով։ Տ. Տ. Մանկասարեան, Կիւլէզեան, Շիքակոյի Հայկական Միութիւնն, Տր. Ուօրտ (Ինտիփէնտէնթի խմբագիր), ոչ սակաւ երէցներ մասնակցած են այս պայքարի ընդդէմ անարժան պաշտօնէին։ Կը պահանջուի որ Թրքաց թեր ելնող Թէրէլ անմիջապէս ետ կանչուի։

Ցոյժ կը խնդրեմք «Հայքի» սիրելի ընթերցողներէն որ բարեհաճին յգել և կամ տեղեկացուցանել մեզ Մհի. Կարապետ Այվազեան Հիւսէյնիկցիին հասցէն։ Գրեթէ երեք տարի է Ամերիկա գալը. 1893 Մայիս 3ին Քանքորտէն Շիքակոյ գնաց ցուցահանդէսին ժամանակը։ Նա է կարճահասակ, նիհար գրեթէ 45 ամեայ ճերմակ մազով ծերունի մը. թէ մինչ ցարդ ապաւինած լինի Շիքակոյ, մասնաւորաբար կը խնդրուի հոն տեղի սիրելի հայրենակիցներէն բարեհաճին հարցաքննել յիշեալ անձ և տեղեկացնել մեզ հետևեալ հասցէիս որով մեծ երախտիք մատուցած կը լինին մեզ։

1249 Elm St., Manchester, N. H.

Գ. Ա.

Պատիւ ունիմ ծանուցանել թէ ճարտարապետ շոգեշարժ մեքենայից լինելով, կը զբաղիմ նաև ժամագործութեամբ երեկոյներն ժամ 8էն մինչև 11 ժամացոյց նորոգելու։

Նաև կը գտնուին քովս ամեն կարգի նոր ժամացոյցներ ալ աժան գներով։ Անոնք որ կը փափաքին աղէկ ժամացոյցի մը տէր ըլլալ առանց որս լինելու խաբեբայ Հրէյից և այլ ազգաց որք կրկնապատիկ գինն կը պահանջեն, կրնան դիմել մեր հասցէին։

MISAK M. PHILIP,
25 Monroe St. New York.

FACTS
ABOUT
ARMENIA

ԻՐՈՂՈՒԹԻՒՆՔ ՎԵՐԱԲԵՐՈՒԹԵԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Այս է անունն անգլիերէն տետրակին որ Հ. Հ. Դաշնակցութեան կողմէն հրատարակուեցաւ։

Տետրակն կը պարունակէ Կլատսթոնի մեծ ճառն խօսեցեալ ի Զէյթը, և Տիլօնի յօդուածն՝ Բօնթէմփորէրի Բիվիւէն արտատպուած։ Այս յօդուած մինչև ցարդ Հայոց վերայ գրուածներուն ամենազօրաւորն և ամենակատարեալն է, զոր կարդացող օտարական մի, որքան ալ գուլ խղճի տէր լինի կը կատղի թուրք կառավարութեան դէմ։ Հայրենակիցք պէտք է փութան տարածել այս տետրակ օտարականաց մէջ։

Գին օրինակին է 20 սէնթ։ Առ նուազն 50 օրինակ մէկէն գնողին կը տրուի 15 սէնթէն։

Դիմել ՀԱՅԿԻ խմբագրատունն։

Ոմանք տալար թղթադրամ կը յղեն մեզ նամակի ծոցով, որ երբեմն կը կորսուի։ Պէտք է կա՛մ Բէճխիթը անել նամակն վամ մը՝նի օրտը յղել առ ի ապահովութիւն։

Տիար Տ. Շուշան հաճած է յանձն առնուլ «Հայքի» գործակալութիւնն Յուսար։ Բաժանորդք կրնան նմա վճարել գինն։

ՌԱՅՈՒՆՔ Ի ՌԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ "ՀԱՅԿԻ"
1896
ԹՈՒԱԿԱՆԻՆ

1. Անոնք որ այժմ իրենց բաժնեգին կը վճարեն 1896 թուականին համար, ներկայ 1895 տարւոյ մնացած ամիսներու թիւերն ալ կը ստանան ձրի։

2. Այս մնացած ամիսներու թիւերն ձրի կը յղուին անոնց միայն որք 1896ին ամբողջ տարւոյն համար (ոչ թէ վեց ամսուան) բաժանորդ կը լինին, կանխիկ, այժմէն վճարելով երկու տոլարն։

3. Սպառիկ բաժանորդագրութիւն չընդունուիր։

4. Հեռաւոր երկիրներ բնակող մեր յարգոյ բաժանորդներէն կը խնդրեմք որ այժմէն վերանորոգեն իրենց բաժանորդագրութիւն, որպէս զի 1896ի սկիզբէն անընդհատ չարունակեմք թերթի յղումն, առանց երկմտելու իրենց յօժարութեան կամ հասցէին նոյնութեան վերայ։

«Հայքի» նախորդ տարիներն կը վաճառուին հետևեալ գներով.

Ա. տարի,	1	տալար	50	սէնթ	կամ 7.5 ֆր.
Բ. ,,	2	,,			կամ 10 ֆրանք։
Գ. ,,	2	,,	,,	,,	,,
Դ. ,,	2	,,	,,	,,	,,

ՄԱՐԶԱՐԱՆ

ՄԱՐԶԱՐԱՆն 117 երեսէ բաղկացած աշխատասիրութիւն մ'է Տ. Գրիգոր Դասպարեանի գրչէն, տպեալ Նիւ Եորք, Մ. Ս. Գ.ի տպարանում, 1892ին։ Առաջին մասին մէջ, որ 77 հատուածներէ կազմեալ է և 36 ձևերէ կամ պատկերներէ, կ'ուսուցանէ թէ զինուորն ինչպէս պէտք է կայնի, բարուէ, քալէ, վազէ, շրջան անէ, սուին, հրացան բռնէ ու գործածէ, կրակէ անհատաբար, շարքով, ծնրադրութեամբ, գեանամած ևն. ևն.։ Երկրորդ մասում կ'ուսանդէ «ՊԻՏԱՆԻ ԳԻՏԵԼԻՔ ՄԱՐՏԱԳԻՏԱԿԱՆՔ։» Այս գիրքն կարդալ և ըստ այնմ իրենք զիրենք մարզել պարտին մեր երիտասարդք։ Գին 50 սէնթ։

ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՔ

Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐՔ

Հայ ցեղին Հոգեբանութեան վերայ անդրանիկ երկասիրութիւն մ'է այս ուր պարզուած են Հայոց ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԻՈՅՆ բարեմասնութիւնք և ազնիւ միտումներն, և ցուցուած է Հայաստանի բնագրական ազդեցութեանց դերն հայկական բնաւորութիւնն կազմելու մէջ։ Այդ իմաստասիրութենէ կը բխին չորս եզրակացութիւններ ազգային խղճականի և դաստիարակութեան վերաբերութեամբ, որք կարճ ի կարճոյ նշանակուած են։

Գինն է 50 սանթիմ (10 սէնթ) 31 երես։ 1894

ԱՅԲԵՆԱԲՕՍՈՒԹԻՒՆՔ

Այս տետրակ հաւաքածոյ մ'է հեղինակին ազգային ատենախօսութեանց եօթին, որք են ՁԷՑԹՈՒՆ, ՍՈՒՐ, ՀՆԱՐ է, ԴՐԱՆ ԳԱՂՏՆԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ, ՁԱՐԿ, ՆԵՐԲԻՆ ՎՏԱՆԳԲ, ՑԱՂԹՈՒԹԻՒՆ ՕՐԷՆԲԻ ՈՒԺՈՎ։ Գինն է 1 ֆրանք (20 սէնթ) 71 երես։ 1893

ԱՐՈՒԵՍՏ

ԱՅԲԵՆԱԲՕՍՈՒԹԻՒՆ

Իւր տեսակին մէջ առաջինն ու միակն է ի հայերէն գրականութեան։ Ի պէտս վարժարանաց յօրինուած է, և կուսուցանէ կարդալու և ճառախօսելու արուեստն, արուեստ գեղեցիկ և դժուարին, որոյ հիմնական կարեւորութիւնն դեռ բաւական զգալի եղած չէ առ մեզ։ Բնան և մէկ դասերու մէջ ամփոփուած են կանոնք և բացատրուած են օրինակօք հետեւեալ հանգամանք ճառախօսութեան։— ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ, ՁԱՑՆ, ՇՆՁԱՌՈՒԹԻՒՆ, ՊՆԴՈՒՄՆ, ՈԼՈՐՄՈՒՆԲ, ՍԱՀՈՒՄՆ, ՁԱՑՆԻ ԱՍՏԻՃԱՆԲ, ՁԱՑՆԻ ՁՕՐՈՒԹԻՒՆՆ, ՁԱՑՆԻ ՈՐԱԿՆԵՐՆ, ԱՐԱԳՈՒԹԻՒՆ, ՀԱՐՑ ՊԱՏԱՍԽԱՆԻԲ և ՇԱՐԲ, և ատենախօսութեան պէսպէս ՁԱՐԺՄՈՒՆԲ ներկայացուած են 16 պատկերօք։

Գինն է 2ուկէս ֆրանք կամ 1 բուպլի (50 սէնթ։) Ութածալ 120 երես։ 1891

ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԱՆՑԵԱԼՆ ՈՒ ԱՊԱԳԱՅՆ

Հայ բողոքական եկեղեցւոյ մի անչատ կազմաւորման առաջնորդող սխալ քայլերն պատմաբանելէ յետոյ՝ հեղինակն կը ցուցնէ թէ այդ եկեղեցական կազմակերպութիւն բոլորովին զուրկ լինելով հայ ազգային հանգամանքէ՝ չի յաջողիր մեր մէջ, և կ'առաջարկէ որ հայ բողոքականք թողուն այդ օտար դրութիւնն և բուն ազգային կամ մայրենի եկեղեցւոյն բարեկարգեալ այնպիսի մէկ դրութիւնն որդեգրեն որ կարենայ իբրեւ մաքրուած և ազգային եկեղեցւոյ տիպար նկատուիլ ազգին լուսամիտ մասէն։

Գինն է 1 ֆրանք (20 սէնթ) 61 երես։ 1888

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

Այս երկ կը ջանայ պարզել թէ Հայկական Խնդիրն այլ ևս կենայ և ընչից ապահովութեան խնդիր չէ, այլ Հայ ազգին իւր պատմական հայրենեաց մէջ վերածնութեան կամ կորստեան խնդիրն է։ Հետևապէս հարցն այն չէ թէ կարո՞ղ ենք համակրանաց և պաշտպանութեան, այլ թէ կարո՞ղ ենք ինքնապաշտպան լինիլ և վերականգնիլ իբրեւ ազգ։ Ներկրաւոր թագաւորութիւնն, ինչպէս ղերկնաւորն, բռունք յափշտակեն։ Արտաքին ճշմարիտ աջակցութեան ընդունակ կը լինիմք միայն երբ զինեալ աջ մեր բարձրացուցեմք։ Ոչ թէ բան մ'ասելու այլ բան մի լինելու խնդիրն է երկու խնդրոց մեծագոյնն։

Գինն է 50 սանթիմ (10 սէնթ) 55 երես։ 1893

«ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ» 1892, և «ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄՆ ՀԱՅՈՑ» 1879, Սպառած։

ՀԱՅՐԵՆԻՔ

ՕՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Կը հրատարակուի տարին 300 թիւ։ Օտար երկրաց համար տարեկան բաժանորդագինն է 25 ֆրանք կամ 5 տալար։ «ՀԱՅՐԵՆԻՔ» Թրքահայոց լաւագոյն լրագիրն է։ Հասցէն է —

Journal Le HAIRENIK,
Galata, Constantinople, Turquie

ՀԱՅԵՐԷՆ ԹԵՐԹԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

ՄՇԱԿի տարեկան բաժանեգինն է 5 տոլար հասցէն է "Խմբագրութիւն Մշակի"(MSCHAK) Թիֆլիս, Կովկաս, Ռուսիա։ ԱՐՁԱԳԱՆՔԻ եւ պայմանն ու հասցէն նոյն է։

Մեր նշանաւոր ուսումնական թերթերն են ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ և ԲԱԶՄԱՎԷՊ։ Տարեկան բաժանեգին իւրաքանչիւրին է 2 տոլար։

ԲԱԶՄԱՎԷՊԻ հասցէն է,
Redaction du BASMAVEP
St. Lazare. Venis. ITALIE

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅի հասցէն է,
Redaction du HANTES,
Conven Mechitariste,
VIENNE, AUTRICHE

ԼՈՒՍԱՒՈՐԻՉ-ԱՐՄԷՆԻԱՅ բաժանեգինն է 3 տոլար 75 սէնթ. հասցէն է—
33 De vere Gardens W, LONDON, ENG.

«ԱՐԱ»ի Տարեկան բաժնեգինն է երկու տոլար.
Հասցէն է. Editor of ARA,
Chogda, Bengal, INDIA.

«ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼ»
Հանդէս կիսամսեայ
25րդ տարի
Տարեկան բաժնեգինն է, օտար երկրաց համար 17 Ֆրանք կամ 3 տոլար 40 սէնթ։ Հասցէն է—
M. M. MAMOURIAN,
Smyrne. TURQUIE

ՀԻՆ ԱՇԽԱՐՀԸ ՓՈՂ ՈՒՂԱՐԿԷ ԱՄԷՐԻՔԸՆ ԷՔՍՓՐԷՍ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԱՆԻ ՕՐՏԸՐՈՎ

(American Exprss Co'.s Money Order)

Կատարելապէս ապահով են. Այդ ընկերութեան ո և իցէ օֆֆիսէն կրնաս առնուլ հետեւեալ պայմաններով վճարելի յեւրոպա.

Ոչ աւելի	քան		5 տոլար		5 սէնթ
,,	,,	,,	10	,,	8
,,	,,	,,	20	,,	10
,,	,,	,,	30	,,	12
,,	,,	,,	40	,,	15
,,	,,	,,	50	,,	18
,,	,,	,,	100	,,	30

ԴԻԻՐՈՒԹԻՒՆ ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ
ՄԱՐԴՈՑ ԵՒ ՍՏԱԿԻ

Նաւերու տոմսակ կուտանք դէպ ի Թուրքիոյ կամ Եւրոպիոյ ամէն կողմ երթալ ուզողներուն։ Մասնաւոր գծեր ունինք ուղղակի Թուրքիա կամ Ռուսիա տանելու։ Մեծ դիւրութիւն մը կը լինի ճամբորդներուն երբ հոս գիտեն թէ ինչ գծով պիտի ուղեւորին, և տոմսակնին կը գնեն մէկէն, որով թէ' աժան գնով պիտի առնեն և թէ' օտար երկիրներու մէջ տոմսակ գնելու համար միջնորդներու պէտք չունենան և չխաբուին։ Նոյնպէս Եւրոպայէ դէպի հոս եկողներուն եւս մեծ դիւրութիւն է տոմսակը հոս գնել և ղրկել, որ ստակը չկորսուի և չխաբուին ինչպէս շատերուն եղած է։ Ամենէն լաւ գիծը գիտցուած է ՖՐԷՆՉ ԼԱՅՆը որուն վրայ բոլոր ճամբորդներէն գոհունակութիւն լսած ենք։ Նաւերը մեծ և գեղեցիկ են և արագ կ'երթան. լաւ կերակուր և գինի կուտան, և աժան գնով։

Նաև մեր տանց ստակի փոխադրութիւնը տարիներէ հետէ գոհացուցած է բոլոր յաճախորդներն։ Փորձառուներէն հասկցիր ստակդ ձեռքէդ հանելէդ առաջ որպէս զի չխաբուիս, երբ ըսեն թէ ուրիշներէն աժան կուտանք։ Ապահովութիւնը բոլոր շահերուն մեծագոյնն է և շատ տարիներու փորձառութիւնը մեծ ապահովութիւն մ'է։ Ասոր ստակ և տոմսակ Թուրքիոյ կամ Եւրոպիոյ ամէն կողմ ղրկել ուզողներ կամ տեղեկութիւն ուզողներ կրնան դիմել հետեւեալ հասցէին։

Նամակներու պատասխանները շուտով կը գրուին։

D. M. SHOOSHAN
41 Exchange St., Worcester, Mass.

ՆԻՒ ԵՈՐՔ

ՀԷԹ ՀԱՈՒԶ

անունն է Ուստըրի Ֆրօնթ փողոցին մէջ
գտնուող թիւ 14 վաճառատանն,
ուր կը վաճառուին գլխարկ, գլխանոց,
ձեռնոց, շապիկ, օձիկ, փողկապ.
ամենն ալ

ԱՄԵՆԱԱԺԱՆ ԳՆԵՐՈՎ

Հայ գաղթականութեան պէտքերուն համապատասխանող խանութն է աս, ինչպէս արդէն շատերն փորձով տեսած են։



ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՍՆՏՈՒԿՆԵՐ

Հայերը որ շատ չեն երթար թատրոն, բայց պէտք ունին զբօսանքի և անմեղ զուարճութեան, կրնան ամենաքաղցր նըւագածութիւնը իրենց սենեակներուն մէջ վայելել, մեր այս աշխարհահռչակ սնտուկներէն գնելով։ Մեր սնտուկները 50 սենթնոցէն մինչև 1,500 տալերլոց են։ Մարդուն կեանքին չափ երկար կը դիմանան։

Այս երկրին մէջ տարիներով գործածելէ վերջ, կրնաս հետդ տանիլ տուն իբրև նորանշան և ուրախացունող ընծայ մը քու սիրելիներուդ։ Դիմէ առ

ԺԱՔՕ և ՈՐԴԻ JACOT & SON
39 Ur'on Square, New York.

Կը խնդրեմք որ մեծի օրտըրի կամ մանտա տը փօսթի միջոցաւ խմբագրութեա նըս դրամ յղողներն՝ Նիւ Եօրքի փօստ օ-ֆիսին Station E (Եդ ճիւղ)ին ձեռքով զայն մեզ հասցունելու հրահանգ տան իրենց քաղաքի թղթատան։ Այսպէսով մեծ դիւրութիւն ընծայած կը լինին մեզ։

Ed. LEGOLL
ԴԵՂԱԳՈՐԾ

286, 7դ. Էվինիու Նիւ Եորք
26դ. և 27դ. Փողոցներուն միջև
Դեղագրեր կը շինուին խնամով

BUSH & Co.
ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.
(Հաստատեալ ի 1849)

65 Front St., Worcester, Mass.
Դեղագիրք խնամով կը պատրաստուին
և չափաւոր գնով

ՈՒՍՏԸՐԻ ՀԻՆԳ ՍԷՆԹ ԽՆԱՅԵԼՈՒ ՊԱՆՔԱՆ

Այս պանքան հիմնուած է 1854ին. կ'ընդունի մինչև անգամ հինգ սէնթ։ Ժամերն են կէս օրէն առաջ 9էն մինչև կէս օրէն վերջ 4։ Շաբաթ օրերն 9էն մինչև 1։
Հասցէն է 314 Մէյն փողոց։

PATENTS
CAVEATS, TRADE MARKS
COPYRIGHTS.

CAN I OBTAIN A PATENT? For a prompt answer and an honest opinion, write to **MUNN & CO.**, who have had nearly fifty years' experience in the patent business. Communications strictly confidential. A **Handbook** of Information concerning **Patents** and how to obtain them sent free. Also a catalogue of mechanical and scientific books sent free.

Patents taken through Munn & Co. receive special notice in the **Scientific American**, and thus are brought widely before the public without cost to the inventor. This splendid paper, issued weekly, elegantly illustrated, has by far the largest circulation of any scientific work in the world. **$3** a year. Sample copies sent free.

Building Edition, monthly, $2.50 a year. Single copies, **25** cents. Every number contains beautiful plates, in colors, and photographs of new houses, with plans, enabling builders to show the latest designs and secure contracts. Address
MUNN & CO., NEW YORK, 361 BROADWAY.

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ